պատեալ, պահեալ, պաշարեալ զմեզ». Շատերը գերի յեն ընկնում հենց բերդի դռների առաջ, յեթե ուշացել եյին ներս մտնել, և նրանց հարազատներն ու սիրելիները վոչնչով ոգնել չեյին կարող. հարուստ և ազքատ հավասարապես մատնված եյին սովի, հափշտակության. «յերեկօրեայ զառաւօտ խնդրէաք և ի նմա զեռանդն երանեալք, այս ոչ շարաթու և աւուրց, այլ ամաց երից սորին յերկարեալ և գործելոցն վրէժ ոչ կշիռ հատուցեալ։ Եւ այս ազէտ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեան տոմարի հայկազեան սեռից հարիւրից կրկնակի քառից և վեցեակ վեցից»։ Վերոհիշյալ անհայտ ժամանակագրի* տված տեղեկությամբ այս արշավանքն սկսված եր Մուղանից ՊԼԵ==1386 թվի գարնանը, «յաւուրս աւագ զատկին». ասել է, մի ամբողջ տարի յեր տևել Սիւնիքի գրավումը և այնտեղից Շահապունյաց գավառն անցնելը։ Յե՞րբ ընկավ բերդը և ի՞նչ բաղդ վիճակվեց Պռոշյաններին, վորոնք, անշուշտ, այնտեղ եյին իրրև բերդի և գավառի տեր իշխանները, տեղեկություն չունինք. համենայն դեպս այդպիսի յերկարատև պաշարումը, յեթե մի կողմից բերդի անմատչելիության պիտի վերագրել**, վոչ պակաս նաև զեկավար Պռոշյանների քաջության։ Հավանորեն բերդի անկումից հետո նրանց մի մասը ամրացավ Վայոց ձորի լեռներում և շարունակեց յուր գոյությունը։

Ամիր-Հասան Բ.-ով ընդհատվում է Պռոշյանց տոհմի հատատուն հաջորդականությունը. ինչպես տեսանք, Տաթևացին իսկ, վոր 1387 թվին ապաստան եր գտել Շահապունք բերդում, չի հիշատակում բերդի պաշտպան իշխանի կամ իշխանների անունները։ Մոնղոլական պետության անկումից մինչև Լանկթամուր, գրեթե, վոչինչ չգիտենք հայ իշխանությունների, դրանց թվում և Պռոշյանների մասին. իսկ այնուհետև յեղած տեղեկությունները կցկտուր են կամ զուրկ կուլտուր-պատմական նշանակությունից։ Ժե. դարու առաջին քառորդին վոմն «պարոն Խոնդքարի» հիշատակությունն ունինք Սպիտակավոր Աստվածածնում, վոր հավանորեն Պռոշյան եր, թեև այս ել հաստատ պնդել կարելի չե.

«Զպարոն Խոնդքարն յիշեցէք ի քս թվ պծբ» (գուցե և պձբ)։

Արձանագրությունը գտնվում է մուտքի ձախ կողմը։

Պռոշյանների մասին հիշատակարանները կրկին խոսել են սկսում միայն Ժե. դարու յերկրորդ կիսից. նրանց հոգևոր և մտավոր կեդրոնն այժմ Սպիտակավոր Աստվածածինն է Սրկղունք ավանի հետ և ապա Գեղարդա վանքը։ Ժամանակի նշանավոր անձնավորությունը Ավագտեր «բանասէր» վարդապետն է, վոր մի քանի ձեռագիրներ ունի գրած. դոցանից մեկը գրված ՉԻԴ (=1475) թվին «ի յերկիրս Եղէգեաց, որ կոչի Վայոց ձոր, ի յանապատիս Բոլորաբերդոյ, առ դրան սբ Աստծնէս և սբ Կարապետիս և սբ ճգնաւորաց գերեզմանացս», այսինքն Հասան Բ.-ի շինած Սպիտակավոր Աստվածածնում։ Ձեռագիրը թվագրված է «ի կթղկոսութե տր Սարգսի ընթանուր Հայաստանեայց ազգի, ի յտերի (s!) եպսութի մերում գաւառի տր Յոհանիսի, ածահաճոյ և մաքուր սբ հայրապետի, թոռին մեծին Պռաւշայ, որ ե է առ դրան սբ Գեղարդեան և եղբաւր նորին տր Ստփնսին, նորընծայ կուսակրաւն արեղայի... և բարեհաւատ պրն Զումին, թոռին մեծին Պռաւշայ՝ և սպարապետին Հայոց և որդոց նորին պրն Լաղարէկին, Թուման բեկին, և եղբայր որդոց (s!) սորին պր Հայկազին, Ամիր Վասակին, Հաղրակին, Ամիր Հասանին, եղբարց տր Յոհանիսին և տր Ստփնսին...»։ Ավետարանի հիշատակարանը տեղեկություններ և տալիս նաև գրչի հոգևոր և մարմնավոր ծնողների, յեղբայրների և յեղբոր վորդիների մասին, բոլորն ել կապված Աստվածածնի վանքի հետ։ Նա գրել է յուր ձեռագիրը «առ ոտս երից երանեալ և քաջ հռետորի և բանիբուն վղի և անյաղթ փիլիսոփայի, վարժապետիս իմոյ՝ Սարգիսի, զի որպես զարեգակն փայլէ յազգս հայոց։ Եւ համշիրաք եղբարցս և ուսումնակցացս մերոց՝ Յակոբ վղին, Պղս վղին, Վրդան վղին, զոր տր ած պահեսցէ զոտսայ ի փորձանաց սատանայի ամէն»*։

Նկարիչն է Աբրահամ Ծաղկող, վոր գրչի յեղբորվորդին է և աշակերտը. արվեստը թեև բարձր չե, բայց հետաքրքրական է. թվում է, թե պահել է վորոշ չափով Գլաձորի ավանդությունները և տվել է ստացողների պատկերները (պատկ. 102)։ Պատկերի տակ ծունկ չոքածները՝ աջից՝ ծերունին Սատաղան է, նորա դիմացը վորդին՝ Յեղիշե քահանան, վորի համար գրված է ավետարանը, իսկ ծունկ չոքած կինը՝ Դիլշատն է, Սատաղայի ամուսինը, պատկերների վերտառությունների համեմատ։ Սկզբնաղբյուրի մեջ սրածայր կամարի տակ նստած է թագադրված Մարիամ, վոր ծիծը դրել է յուր մանկան բերանում**։ Ներքևում բարեխոս Հովհաննես Մկրտիչ անապատականի զգեստով և Ստեփաննոս նախավկա մի ձեռքին բուրվառ, մյուսում խնկաման։ Բացի Մատթեոսից կան և մյուս ավետարանիչներն ու նրանց սկզբնաղբյուրները. Մարկոսի սկզբնաղբյուրի կեդրոնում նստած է մեծ աթոռի վերա Ամենակալը, կողքերից Գաբրիել և Միքայել մի մի նիզակ ձեռքներին։ Ղուկասի տակ՝ 104բ. նկարիչն

* Սամ. Անեցի. շար. 171։

** Նկարագրությունը և պատկերը տես եջ 53։

* Ձեռ. էջմ. № 377 Գ8=2634 (Հավել. Բ. 28)։

** Մինչև վերջերս Աստվածածնի պատկերագրության այդ տիպը համարվում եր զուտ արևմտյան, մինչև վոր Կայիրեյի մոտ Սակկարայի վանքում գտնվեցավ կոպտական մի վորմանկար (Лихачев. 157—164)։ Ինձ հայտնի հնագույն յերևույթը հայ արվեստի մեջ այս տիպի Գլաձորի դպրոցի հայտնի նկարիչ Դավիթ Տարոնեցու գործն է, Յեսայի Նչեցու ավետարանի մեջ 1323 թվից։